



## ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ՏՈՄԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԻԵԶԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ<sup>1</sup>

ՀՅ.— Զի՞նչ է իննևտասներեակն:

ՊԽ.— Զինն և տասն մասունսն, որ ամի ամի յաւելու ի լուանէն և ի տասն և ինն ամին լինի երեք հարիւր վաթսուն և մի մասն, երեսուն երեսուն ժամն առնեն և լինին օր մի, որ յաւելու ի վերադիրն ազգաց:

ՀՅ.— Զի՞նչ է վերադիրն:

ՊԽ.— Մետասան աւուրսն, զոր աւելի ընթանայ արեգակն, քան զլուսինն, վերադիր կոչի, որ յամենայն ամի ի վերայ ածեմք, զի հաւասարեսցի:

ՀՅ.— Զի՞նչ է բազմապատկելն:

ՊԽ.— Յաղագս ժողովելոյ զմետասան աւուրսն ի թերատ իննևտասներեկին: Եւ պատճառն այս է, զի յամենայն ամի մետասան աւուրս յառաջ կատարէ լուահին զրնթացս իւր, քան զարեգակն, զի յաւուրս չորեգշաբաթի ստեղծ Աստուած զարեգակն ընդ առաւոտս և զլուսինն ընդ երեկս, և ի ստեղծման լուսնին մետասան մասն պակաս էր ի յընթացից արեգականն և այն լինի յամին ժամս մետասան և ի տարին՝ աւուրս մետասան, որ կոչի վերադիր:

ՀՅ.— Զի՞նչ է ըստ նահանջիցն պակասեցու:

ՊԽ.— Եւ այս վասն տէրունեան լրմանն, զի ի նահանջի ամն զհասարակածն յառաջ փոխէ, այն՝ մի թիմ, որ ի փետրուարն է և թէ վերադիրն մեր ո՛չ պակասի, լրումն մեր ո՛չ զուգի ընդ այլոց լրմանց, այլ մի աւուրս յառաջ հանդիպի:

ՀՅ.— Զի՞նչ է ըստ իննևտասներեկացն յաւել:

ՊԽ.— Զաւել/լեալսն լիննևտասն ամի ի վերայ ածելով հաւասարէ զպակասումն նահանջիցն: Եւ այն որ ասէ՝ իննևտասներեկին երկոտասան ած, պատճառն այն է, զի յապրիլի երեքտասանիցն, որ է սկիզբն բոլորին, մինչև ի մարտի քսան և եօթին, որ է կատարումն բոլորին յամենայն ամի, մնացեալ լինի մասունք իննևտասն ի վերադրացն հայոց և ի իննևտասն ամին լինին մասունք երեք հարիւր վաթսուն և մի երեսնամասնեայ ժամք երկոտասան և մնայ մաս մի: Իսկ երկոտասան ժամքն, որ եղև օր մի ըստ լուանին աւուրս, այս է, որ ասէ իննևտասներեկի ամին երկոտասան ած, զի զոր նահանջն պակասեցուցանէ, այս լցուցանէ:

1. Ծարունակած նախորդ համարից:

Հ8.— Զի՞նչ է որ ասէ ութն հանապազ ի բաց երթ:

ՊԽ.— Յառաջին ամին թուականին ո՞չ նահանջ կալր և ո՞չ իննևտասներեակ, զմինն մետասան բազմապատկել և ութն երթեալ, մնայ երեք, այս է որ ասէ ութն հանապազ երթ, զի քան զդնել թուականին հայոց վերադիրն քսան և երկու էր, և ի դնել թուականին վերադիրն երեք էր, զի երբ զառաջին ամին բազմապատկես, լինի մետասան, և բերես ի վերայ զի՞ն վերադիրն քսան և երկու, լինի երեսուն և երեք, հան ի բաց զի՞ն վերադիրն քսան և երկու և զնոր վերադիրն երեք, մնայ ի միջոցն ութն, այս է որ ասէ ութն թիւ հանապազ ի բաց երթ:

Հ8.— Զի՞նչ է երթ երեսուն երեսուն:

ՊԽ.— Վասն զի վերադիրն թէ անցանէ քան զերեսունն, զերեսուն երեսուն գնալ պարտ է և այս է, զի ամիսք ժողովեալք ի մետասանիցն քանակի այսր թուոյ, զսոսա ի բաց որոշելով, մնացեալքն լինին ամիսք ներկայի լուանին ամի:

Հ8.— Զի՞նչ է եօթներեակն:

ՊԽ.— Աւուրք են, որ շաբաթանան, և է այսպես: //Կալ զաւուրս տարոյն երեք հարիւր վաթսուն և հինգ, շաբաթս արա եօթն եօթն, և մնայ մի օր և այն է, որ անեցուցանէ զնա, զի մնացորդը տարոյն աճէ, մինչև լինի եօթն օր և ապա ի նմին դառնայ: Եւ այն որ ասէ երեք ի վերայ բեր կամ շորս ի բաց երթ, պատճառն այն է, զի նախ քան զթուականն հայոց եօթներեակն երեք էր և յորում ամի զթուականն եղին՝ շորս էր: Արդ, յորժամ եօթներեակ առնես, երեք ի վերայ ած, որ շորսն եօթն լինի, և կամ շորս ի բաց երթ, որ նորոյ սկիզբն լինի շաբաթուն:

Հ8.— Զի՞նչ է որ ասէ կալ թիւ մի:

ՊԽ.— Զառաջին օր ամսոյն ասէ, որպէս յօրագիւտին զքանիս ամսոյն:

Հ8.— Զի՞նչ է որ ասէ կալ հանապազ երեսուն:

ՊԽ.— Զաւուրս միոյ լուանի ասէ, որ ի պակասեցուցանելն զվերադիրն և պկիսակն, զծնունդ լուանին յայտ առնէ:

Հ8.— Զի՞նչ է, որ ասէ կալ հանապազ քառասուն և հինգ:

ՊԽ.— Երեսուն աւուրք լուանին և հնգմուասն ի վերայ, որ զլրումն ցուցանէ:

Հ8.— Զի՞նչ է րոպէն

ՊԽ.— Յաւուրն երկու մասն պակասէ ընթացք լուսնին և ի երեսուն օրն վաթսուն մասն, զոր րոպէ կոչեմք: Եւ զվաթսուն հինգ հինգ թիւ ժամս առնեմք, որ լինի երկուտասան և գտանեմք զծնունդ և զլրումն լուանին:

Հ8.— Զի՞նչ է կալ զաւուրս լուանին, շորեթպատկեալ և հինգ հինգ թիւ ժամս արա:

ՊԽ.— Վասն զի ի հնգմուասն աւուրն շորեթպատկեալ, լինի վաթսուն, որով ցուցեալ լինին ժամք և կիսաժամք և մասունք նոցին:

Հ8.— Զի՞նչ է որ յայտնութիւն ոչ տայ արկանել ի վերայ, այլ ասէ կալ նահանջն և տուր մեհեկի ամսոյ:

ՊԽ.— Վասն զի յարաց երեսուն դի// զեցաւ յայնժամ յատնութիւնն և յետ նահանջից առաջին ամն էր և այս է պատճառն, որ երբ թուական առնէ, ասէ կալ թիւ մի յարաց և թուեա ցյայտնութիւնն:

Հ8.— Զի՞նչ է որ ասէ կալ առանց կիսակի:

ՊԽ.— Զի առաջաւորն աւագ լրմանն պատկեր է որպէս ոչ անդ և ոչ աստ առնել զկէսն:

Հ8.— Զի՞նչ է որ ասէ կալ երեքտասան և զնահանջն:

ՊԽ.— Վասն զի յառաջին ամի թուականին հասարակածն յահկի երեք-  
տասան դիմեցաւ, զայն երեքտասանն ի վերայ նահանջին առէ արկանել և  
առաջին ամսոյն տալ: Այսպես իմա և զամենայն եղանակսդ, և դտօնսդ, որք  
նահանջիւ են գրեալ:

ՀՅ.— Զի՞նչ է կալ հանապազ քառասուն և վեց:

ՊԽ.— Զի տէրունեան լրումն օր մի աւելի առնու, քան զայլ լրմունս  
տարոյն և այս, վասն այնորիկ, զի արտաքոյ հասարակածին հանցէ զպա-  
սեքն, յայն սակս տալ երթալ զվերտպիրն:

ՀՅ.— Զի՞նչ է որ ասէ՝ թէ քան զհասարակածն աւելի է, ի նմին ամսեան  
է, ապա թէ պակաս է, յառաջիկայ ամիսն անցանէ:

ՊԽ.— Որպէս ասաց, եթէ քան գհասարակածն յառաջ կամ ի հասարա-  
կածին անհնար է մեզ տօնել, այլ աւուրդ միով յառաջ տանեմք:

ՀՅ.— Զի՞նչ է միւս կիրակին անցու:

ՊԽ.— Զի ի մի ամին երկու զատիկ մի արասցուք, և է այսպէս. զի անց-  
եալ զատիկն լինի լեալ յառաջին օր տարոյն և միւսն լինի յելս յետի օր տա-  
րոյն, որպէս մինն լինի լեալ ի մուտն նաւասարդոյ յառաջին օրն, և միւսն  
յելս տարոյն յաւելեաց ի հինգն, և այս է ի միւս շաբաթն անցանելն:

101ա ՀՅ.— Զի՞նչ է կա/նովս զատկին պատճառն կամ անագան և երեքտա-  
սանն լրունին:

ՊԽ.— Արգ՝ ստոյգ պատճառ զատկին այս է, զոր ասացեալ է քաջ հոե-  
տորաց, զի կատարէ արեգակն զտարին յատկը երեք հարիկը վաթսուն և հինգ,  
իսկ լուահին՝ երեք հարիկը յիսուն և շորս, մետասան օր պակաս, քան զարե-  
գակն, զի յամէն ամսոյ մնայ ի լուանէն կէս օր, որ ի երկուտասան ամիսն լինի  
վեց օր և հինգ օր աւելեաց, որ լինի մետասան օր և այս է, որ ամի ամի  
բարդի ի վերայ լուանին և կոչվ վերադիր, և ըստ յաւելուածովթեան վերադիրն  
ի ներս կոյս մղէ զզատիկն և առնէ կանովս զատիկ: Եւ ի յերեք ամն լինի վե-  
րադիրն երեսուն և երեք օր և յայնմ ամի երեքտասան լուանին լինի և կարի  
անագան զատիկ առնէ, որ ի դուրս կոյս մղէ երեքտասան լուախնն:

## ՎԱՍՆ ՊԱՏՃԵՆԻ ՀՌՈՄԱՅԵՑԵՑԻՌՅՆ ԵՒ [ՎԱՍՆ] ԿՐԿՆԱԿԱՑ ԵՒ ԿԻՍԱԿԱՑ

Կալ զյունուարի ամիսն երեսուն և մի և երթ եօթն եօթն, և որ մնայ՝  
կրկնակ է փետրուարոյ. և այսպէս՝ այլքն ի կարգին:

Վասն կիսակաց. կալ զյունուար երեսուն և մի և երթ քսան և ինն, որ  
մնայ կիսակ է փետրուարոյ. սապէս և այլն ի կարգին:

ՀՅ.— Զի՞նչ է մեծ յարակայն:

ՊԽ.— Յառաջին թուականին հայոց ի յունուարի եօթն մուտ էր մեհեկի  
ամսոյ վեց, այն որ յառաջն էր յունուարի և հինգ աւելիքն, որ լինի տասն և  
մի, զոր կոչեցին յարակայ յունուարոյ: Կալ զյունուար իւր յարակայովն, և  
զերեսուն երթ, որ մնայ՝ յարակայ է փետրուարոյ: //Նոյնպէս արա և զայսն  
ամենայն՝ որ ի կարգին են:

ՀՅ.— Զի՞նչ է միշնայարակայն:

ՊԽ.— Որպէս ասացաւ, յիսկզբան թուականին հայոց ի յունուարի եօթն  
դիմեցաւ, ամսամուսն մեհեկոյ վեց օր աւագ էր յունուարի, վասն այնորիկ  
ոյարակայն յունուարոյ վեց, և փետրուարի վեց, եղեւ կաղանդ արեգ ամսոյ  
և զեց յարակայ ասեն փետրուարոյ, իսկ ի մարտի ութն մուտ էր ահկի ամ-  
սոյն, զի եօթն օր յառաջ եղեւ և հինգ աւելիքն, որ լինի յարակայ մարտոյ եր-

կոտասան. և այսպէս ապա ի կարգ անկեալ մինչև ցդեկտեմբեր զաւելուած ամսոցն և զաւելիսն Հռոմայ զուգեալ արտայալտէ զյարակայս իւրաքանչիւրոցն:

ՀՅ.— Զի՞նչ է փոքր յարակայն:

ՊԽ.— Ի մեծ յարակայէն զեօթն ի բաց առ, որ մնայ, այն է փոքր յարակայ, և յալլում տեղի տասն ասեն ի բաց տանել: Եւ այսքանիւր զոցես զուգաւորութիւն ազգաց:

ՀՅ.— Զի՞նչ է թուականն Հռոմայնցոցն:

ՊԽ.— Ամենայն թուականք ազգաց զառաջադրութիւն իւրեանց ցուցանեն, որ յառաջ քան զհայոցս անշարժ թիւ յիսկըրան տումարի իւրաքանչիւրոցն իրեւ հիմն հաստատուն նախ քան զժամանակն, որ յետոյ մեկնեցին և անուանեցին հայոց, որ յառաջ էր քան զմեր ժամանակս շարժականս, վասն որոյ ասէ կալ այսչափ, բեր ի վերայ և զհայոցն, քանդի սա թիւ է շարժական հողակեալ յազգս և ահա յայտ եղև թէ յառաջ:

ՀՅ.— Զի՞նչ է շրջան մի ամք ԾՂԲ (532):

102ա

ՊԽ.— Զի արփիագեղն շարադրեալ միական ընթաց/ցիւք երթեալք ընդ չափողին գիշերոյ պարառութեամբ քսան և ութ իննևտասներեակին և իւր փոքուն՝ աստանօր վճարեալ զպարտուցն խմոր: Դարձեալ գլուխ ի կարգ ամսոցն և վերադրացն և հօթներեակացն ըստ ի ավորանէ ընթացմն շափեալ:

ՀՅ.— Զի՞նչ է որ երթամք իննևտասն իննևտասն յորժամ վերադիր առնեմք:

ՊԽ.— Վասն զի լուսինն ի իննևտասն ամին դառնայ:

ՀՅ.— Եւ ո՞վ է որ դարձուցանէ զնա:

ՊԽ.— Ամիսքն նահանջեալ շարաթանան, վասն զի վերադիրք լուսնին մետասան աւուրք, մնացեալքն յարեգակնէն ժողովին ի իննևտասն ամին և լինի եօթն ամիս պակաս օր մի, սկսեալ յալրիլի երեքտասանիցն, որ է գլուխ բոլորի ապրելեանցն մինչև ի քսան և հինգ մարտի, որ է կատարումն բոլորին:

ՀՅ.— Զի՞նչ է որ ի տասներորդ կանոնին թիւ մի յաւելու:

ՊԽ.— Զի պակասեալ օրն յեօթն ամսոյն լուռ աւելի օրն այն, որ ասէ իննևտասներեակի երկուտասան ած, և օրն այն ի ներքս անկանելով եօթն ամիս կատարեալ առնէ և դարձումն լուսնի այն կոչի, զի լրմունք զատկին ի նոյն ամիս դառնան և ի նոյն քանիս: Բայց և զայս գիտելի է, զի մնացեալ մասունքն, որ յամենայն ամի իննևտասն մասն մնացեալ լինի՝ ըստ հայոց վերադրաց և ո՞չ ըստ հոռոմի, որ ժողովին ի իննևտասն տարին և լինի երեսնամասնեայ ժամք երկուտասան, որ է ըստ լուսնին օր կատարեալ: Եւ առնէ զվերադիրն երկուտասան և մնայ մասն մի ամելի:

ՀՅ.— Իսկ մասն այն սկսեալ յԱղամայ [որքա՞ն ժողովի] մինչև յեօթներորդ դարուն:

102բ

ՊԽ.— Ամն ժողովի և լինի մասունք երեք հարիւր և վաթսուն, որ լինի

երեսնամասնեայ //ժամք երկուտասան, որ է ըստ լուսնի օր կատարեալ: Եվ առնէ զվերադիրն երեքտասան, այն է որ կոչի իննևտասներեկից իննևտասներեակ, և այս է զոր ասեն իմաստումքն կատարեալ լուսին: Դարձեալ ասեն

իմաստումքն, թէ յորժամ օրն այն ի ներքս անկանի, վերջին լրումն լուսնին, որ ոչ մաշէ և ոչ աճէ, այլ միշտ կայ կատարեալ, որպէս ստեղծաւ յառաջագոյն և ոչ փոփոխի ըստ ժամուց, այլ միշտ յերեկորեալ ելանէ, որպէս ստեղծաւ յառաջագոյնն մինչև ի կատարումն ժամանակաց: Իսկ ոմանք ասեն թէ՝ լուսինն ո՛չ կատարի և ո՛չ գործի, այլ մասունքն իւր կատարի, որպէս ցուցաւ:

**ՀՅ.— Զի՞նչ է որ երթամք քսան և ութ քսան և ութ յորժամ եօթներեակ առնեմք:**

**ՊԽ.— Վասն զի արեգակն ի քսան և ութ ամն դառնայ:**

**ՀՅ.— Եւ ո՞վ է որ դարձուցանէ զնա:**

**ՊԽ.— Արեգակն կատարէ զտարին յաւուրս երեք հարիւր վաթսուն և հինգ և ժամս երեք, իսկ երեք ժամն ժողովեալ, ի շորս ամն լինի օր մի, որ կոչ նահանջ, որ է որոշումն ժամանակաց, իսկ ի քսան և ութ ամին լինի եօթն օր, որ է շաբաթ: Եւ այս է որ կոչի նահանջից նահանջ և դարձեալ յառաջին դառնայ: Եւ դարձումն յարեգական կոչի, զի եօթներեակի խորանքն յառաջին խորանն դառնայ ըստ հոռոմի տումարի և ոչ ըստ հայոց:**

**ՀՅ.— Զի՞նչ է որ երթամք քսան և ութ քսան և ութ բերեմք ի վերայ մնացելոյն շորս մասն:**

**ՊԽ.— Զի նահանջեալ եօթներեակն չէ շաբաթացեալ և երեք ժամքն ի շորս ամի օր մի, զոր կրկնեն զեօթներեակն:**

**ՀՅ.— Զի՞նչ է եօթներորդ աւելեացն:**

**103<sup>ա</sup> ՊԽ.— Զի եօթներեակ առաջիկայ ամին յի // սկզբան երրայեցոցն այսպէս պատահեաց և վարի մինչև ցայսօր ամենայն ազգաց:**

**ՀՅ.— Զի՞նչ է մի թիւն որ յաւելու յեօթներեակն ամենայն ազգաց:**

**ՊԽ.— Սա զամենայն թիւն ժողովէ մինչև ցեօթնից եօթն, որ մի ամ ասի յորելեան:**

**ՀՅ.— Զի՞նչ է որ ի փետրուարի յելսն գտանի օր նահանջի:**

**ՊԽ.— Վասն զի աստ մտանէ եօթներեակին թիւն, որ յառաջ ածէ զհասարակաւորութիւն և զեղանակաց շարժմումս:**

**ՀՅ.— Զի՞նչ է որ ի մարտի քսան հասարակածն:**

**ՊԽ.— Վասն զի աստ պատահեաց ի բաժանման լեզուացն և կայ անշարժ ո՛չ միայն այս, այլ և ամենայն տօնք և յեղանակք ազգաց իւրաքանչիւրոցն, քայց ի հայոց, զի գօրն յաւելեալ ի շորս ամն, նորք եօթներեակն յաւելին: Հայք առանձինն նահանջ վարգեցին, զոր ոչ գովլեցին ներհունք արհեստին: Այլ և սա հիմնեցին նորքա տումար մերոյ ազգիս անշարժելի, որպէս և այլոց ազգաց, որ գտանի կարգեալ ի մեծէն Սարկաւագէ:**

**ՀՅ.— Զի՞նչ է հնգեակն և վեցեակն:**

**ՊԽ.— Սկիզբն հնգեկի և վեցեկի յապրիլ շորիցն է ի լրմանց բոլորակին, վասն զի հնգեակն աւուրֆն է, որ յառաջ քան զմարդոյն կազմութիւն, որ է աւուրք աւելեացն, իսկ վեցեակն՝ կէս ամսոցն է, որ ի երկոտասան ամիսն մնայ կէս կէս օր ի լուսնէն և լինի վեց օր և սորքա միաբանեալ, լինեն վերադիր հոռմին:**

**ՀՅ.— Զի՞նչ է տարին և ամն:**

**ՊԽ.— Տեսանելով զարեգակն շրջանէ ի շրջան փոխեալ, իմացան զպա-103<sup>բ</sup> կասովին // աւուրց իւրոց, ասացին՝ տարրաւ, իսկ ամն՝ ըստ ամսոց եղեալ անումն:**

ՀՅ.— Զի՞նը է տարին, և ամիսն, շաբաթն, և օրն, ժամքն և մասունքն:

ՊԽ.— Տարին ունի երկոտասան ամիս, որ է հիսուն և երկու շաբաթ, և օր մի և վեց ժամ, իսկ բոլոր տարին ունի աւորս երեք հարիւր վաթսուն և հինգ և վեց ժամ, և այն վեց ժամն ժողովեալ ի շորս ամն, լինի օր մի, և այն է որ կոչի նահանջ: Եւ բնական օրն է քսան և շորս ժամ, և տասն մասն և կէս, բայց գիտելի է, զի օրն պատկեր է ամսոյն և տարոյն, զի տարին ունի երեք հարիւր վաթսուն [և հինգ] օր, և ամիսն ունի երեք հարիւր վաթսուն ժամ, և օրն ունի երեք հարիւր վաթսուն մասն միայն ի տիմ, զի յամենայն աւորս արեգակն զընթացս իւր կատարէ քսան և շորս ժամ և տասն մասն կէս և տասն մասունքն ժողովեալ յամիսն լինի ժամ և ամսուն տասն, ի բոլոր տարին առնէ զհինգ օր աւելեացն, իսկ կէս մասն լինի յամիսն կէս ժամ և ի տարին, վեց ժամ, և ի շորս տարին օր մի կատարի, և այս է նահանջն:

Եւ գիտելի է, զի բաժանեալ են իմաստունքն զերկինքն երկոտասան կենդանակերպս և զմի կենդանակերպն՝ թրեսուն աստիճան, և զմի աստիճանն վաթսուն տաղիղայ, և զմի տաղիղան՝ վաթսուն սանիս և զմի սանիան՝ վաթսուն դաւալիթ, և զմի դաւալիթն՝ վաթսուն դալիթա, և այսպես փոքրացնեն մինչեւ ի տասնեակն, և փոքր ասեն, որ ցուցանեն զաշխարհս առ ի համեմատելով առաջի երկնիցն իբրև զհատ խաշխաշի ի վերայ երեսաց ծովումեծի:

ՀՅ.— Զի՞նը է նաւուզ:

ՊԽ.— Նաւուզ, որ թարգմանի նոր օր, և է ինքն գարնանամտի օր պարսից, և հնդկաց, և է մարտի երկոտասան:

104w

ՀՅ.— Հի՞նը է պուրճ, և տարածայ, և այլն:

ՊԽ.— Պուրճ՝ կենդանակերպ, տարածայ՝ աստիճանն, տաղիղա՝ մասունք, սանիս՝ բոպէ:

ՀՅ.— Զի՞նը է քեաւիքեապ:

ՊԽ.— Մոլորակ ասել է:

ՀՅ.— Զի՞նը է քեաւիքեապէիր:

ՊԽ.— Մոլորակքն ասելի է:

ՀՅ.— Զի՞նը է ըռաս, և զի՞նը է զանապ:

ՊԽ.— Ըռաս՝ գլուխ վիշապին, զանապ՝ տուտ վիշապին:

ՀՅ.— Զի՞նը է սարիսալ:

ՊԽ.— Տարէգլուխ:

ՀՅ.— Զի՞նը է ծիածան:

ՊԽ.— Գէջ օգն գոգացեալ և ընդդէմ ելեալ արեգականն, առնու վլոյսն ի նմանէ ըստ բոլորակ ձեռյ նորա: Եւ զանազան գոյնքն է շորից տարերացդ դորին, որ են յօդդ՝ սեամ հողոյն, սպիտակն՝ շրոյն, կապոյտն՝ օդյն, զեղինն՝ հրոյն, և խառնուածն ի նոցանէ է ծիրանին և կարմրագոյնն:

ՀՅ.— Զի՞նը է բակն ընդ լուսնի և արեգական:

ՊԽ.— Մնացեալ ամպ է շուրջ զաստեղօքն, որ քարշէ յինքն զսպիտակ լոյս մոլորակացն և լուսաւորի, եթէ ի պարզոյ լինի՝ նշան է խոնաւութեան, եթէ խոնաւ՝ նշան է պարզոյ:

ՀՅ.— Զի՞նը է գիսաւոր աստղն:

ՊԽ.— Ոչ է աստղ, այլ գոլորշի վառեալ ի տարրական հրոյն, յորժամ մերձի ի նմա և տեէ որքան է հիւթ գոլորշոյն և լուսեղն բաշս արձակէ առ

ի ցուցանել եթէ ոչ է ի բնական աստեղաց, այլ է նշան փայլելոյ թագաւորաց պատերազմի, սովոյ կամ այլ ինչ խռովովեան երկրի:

ՀՅ.— Զի՞նչ է թոիչն աստեղն:

ՊԽ.— Գոլորշի է վերացեալ հողմով և մերձեցեալ ի հուրն, և վառի ի 104բ նմանէ և բոլոնութեամբ հողմոյն վարեալ, երկի իբրև զթոփ աստեղ և փութով շիշանի:

ՀՅ.— Լոյսն ուստի՞ իշանի յերկիր:

ՊԽ.— Յարփոյն երկնային իշանէ առ մեզ ի ցուցս ակներև յերկնային փառացն: Եւ ոմանք ի տարրական հրոյն ասեն բաժանումն և խզումն, և լոյս միայն իշանէ, ընդ այսմ ձայն Տեառն բաժանէ զբոց ի հրոյ:

ՀՅ.— Զի՞նչ է փայլակն:

ՊԽ.— Փայլակն լինի ի շիշեալ հրոյն զրով ամպոյն և հողմով, որ ի մէջն է վերստին արծարծի և արտաքս բացափայլէ:

ՀՅ.— Զի՞նչ է որոտն:

ՊԽ.— Գոլորշիք վերացեալ յերկրէ գէջ և չոր խառնեալ, իսկ գէջն լինի ամպ և չորն ի մէջ ամպոյն նեղեալ պատառելով զժամմունս ամպոյն, լինի որոտ և փայլատակունք ես, զոր օրինակ՝ եթէ ոք պատառէ զկտաւ և թափի փոշին, և զի նախ որոտն է և ապա փայլակն, այլ զի ձայնն յամբ հասանէ ի լսելիս, քան զփայլակն, վասն այն յետոյ լսի:

ՀՅ.— Զի՞նչ է շանթքն:

ՊԽ.— Շանթքն լինի ի գէջ գոլորշեացն, որ ի մէջ ամպոյն և չերմութեամբն չորացեալ, քանզի հուր է քարացեալ և թանձր ծանրութեամբն ի վայր յերեալ կոչի կայժակ և լինի յամառնային եղանակս և վասն առաւել և նուազ շերմութեամբ, որ ի գուրս պատառմանն շիշանի: Եւ է որ ի մէջ օդոյդ գայ և շիշանի, և է որ յերկիր հասանի և պատառէ և ի վասն առաւել և ազդու զօրութեանն և չերմութեանն զգայութին կենդանոյ և մարդոյ ապականէ և պատառմութեանն և քանակն և որակն մնայ, և բազումք տեսանեն զսուրն ի մէջ // պատենիցն հալիսալ և պատեանքն անխարնձ մնացեալ: Սապէս յեփփատոս հուրն ընդ կարկտին իշանէր և վասն աղդու զօրութեանն զկենդանիսն սպանանէր և մարմինքն ամբողջ մնայր: Իսկ ոմանք ասեն թէ՝ կայժակն յեթերէն հատանի և ոչ ուրեք դադարի, այլ ծակէ վերկիր և իշանէ ի ներքին կիսագումդն մինչև հասանի առ ազգակիցն իւր, ուստի անկաւ և անդէն գադարի: Իսկ հուրս որ ի մեզ կապեալ է ի նիփ տկար ունի զայրելն, վասն որոյ զքանակն և զորակն նախ ապականէ և ապա զոյացութին իրին: Եւ դարձեալ զի ի գոլորշոյ է բազկացեալ, որ արտաքին մասն հով է գէջ և ներքինն չերմ և չոր, վասն որոյ և զարտաքինսն պահէ և զներքինսն ապականէ:

ՀՅ.— Զի՞նչ է ամպն և ուստի՞ ընծային անձեռք:

ՊԽ.— Երկու գոլորշիք վերանան յերկրէ, մինն չոր և ծխատեսակ և մինն խոտաւ և ի գէջ բնութեանց վերացեալ և ի սմանէ լինին մառախուղ և սառնամանեաց տեսակք, ամպ, և ծինարերք, և կարկուտք, իսկ չորոյն հողմունք և հնշմունք զանազան, որոտմունք և փայլատակունք, կայժակ և այն, որպէս ցուցաւ: Իսկ ամպն լինի յորժամ զօրութեամբ արեգականն վեր քարշին գոլորշիք ի շրոց և ի գէջ տեղեաց: Եվ վասն թանձր գիշութեանն ի տես գալ և սեղմացեալ և ի վերայ միմեանց լինի ամպ:

ՀՅ.— Զի՞նչ է մառախուղ:

ՊԽ.— Մառախուղն է մթագոյն գոլորշի անծննդական շրոց, քան զօդ

**Թանձր** և քան զամպ անօսր, սա ոչ դաւնայ ի յամպ կամ ի յանձրե, այլ մղի  
105բ ի վայր // կոյս և մնայ մերծ երկրի:

**ՀՅ.** — Զի՞նչ է ցող:

**ՊԽ.** — Ցող է զիշութիւն ի պարզոյ իշեալ, զի աստեղք ի գիշերի քարշեն  
ի վեր և ի ծագել առաւտույն դարձեալ յետ ի յերկիր անկանին մանրամասն  
շիթք և դարձեալ ընդ ծագել արեգականն ի վեր քարշեալ ժողովին ի ծայրս  
խոտոց և ծանրացեալ կախին իբրև զմարգարիտս:

**ՀՅ.** — Զի՞նչ է եղեամն:

**ՊԽ.** — Նոյն ցողն թերասառոյց ի վերայ երկրի, իսկ անձրեն է ջուր իշ-  
եալ ի թօթափմանէ ամպոց թանձրացելոց և խոնաւովթեանց:

**ՀՅ.** — Զի՞նչ է ձիմն:

**ՊԽ.** — Ձիմն ծնանի ի ջերմացեալ ամպոյ ի մէջ երկուց ներհակ հողմոց  
և գործեալ լինի ի փրփրատեսակ և սպիտակագոյն և սառուցեալ ի ներհակ  
հողմոյն համանգամայն ընդ փոխին ի ջրոց, վասն այն մասնկունքն նորա  
ոչ խտանան, այլ անգայտացեալ ի վայր բերի և կոչի ձիմն:

**ՀՅ.** — Զի՞նչ է կարկուտս:

**ՊԽ.** — Կարկուտն ծնանի ի ջերմացեալ ամպոյ ամենևին զօրությամբ  
արեգականն քարշեալ ի վեր և ի հիախոյ հողմոյն, որ կոչի Ապարքտիտս,  
լինի պալեալ և ըստ շափոյ թանձրութեանն պատառեալ բեկանի և ի վայր  
բերմամբ գնդի ի ջերմութենէ օդոյս և լինի կարկուտս: Այսոքիկ ի գէջ գոլոր-  
շոյն լինի, իսկ շորն ի ցրումն վանելով արտաքս հոսմանէն՝ հողմ եղեւ:

**ՀՅ.** — Զի՞նչ է հողմ:

**ՊԽ.** — Հողմք նախ ի շորս դէմս բաժանի և իրաքանչիրքն դարձեալ յե-  
րիս բաժանին, որ լինի բռվանդակն երկուտասան, երեք արևելից և երեք արև-  
մտից, երեք հարաւոյ և երեք հիախոյ: Արևելիցն բարեխառն է և ածէ  
106ա արև // և անոյշ անձրե, աջ կողմանն չորացուցանող է և ածի կողմանն գիշաց-  
նող է: Հարաւոյն առնէ որոտ, փայլակ, անձրե խիստ: Աջ կողմանն հալէ  
զպազս և ածի կողմանն առնէ մառախուլ և մէտ և վրովմոնք յամպս: Արև-  
մըտեանն շարժէ ի ծաղիկս: Աջ կողմանն ածէ անձրե և ածի կողմանն կազ-  
մէ զամպս: Հիախոյն կազմէ զկարկուտս: Աջի կողմանն առնէ զծիւն և ձա-  
փի կողմանն նեղէ զամպս և կապէ զանձրես: Դարձեալ, արևելիցն ունի զօ-  
րութիւն յողութիւն առնել օդոյ և լոնկ ջուրբ: Եւ արևմտիցն՝ ճնշելոյ և քամի-  
լոյ: Ունի հողմ հիախոյ, որ առնէ տապութիւն և չորութիւն: Եւ հողմն հարա-  
ւոյ առնէ լուծութիւն և յերկարէ գտկարութիւն: Իսկ արևելից և արևմտիցն  
տածողք են և բարեխառն: Են և այլ եկամուռ և պատահական հողմունք, որք  
ելանեն ի լերանց և ի ծորոց և ի ծովուց, որք են բնականք, որք չեն ընդ  
թուով արկեալ: Ոմանք յերկրէ բղխեն որպէս զաղբիր, և ոմանք ի յամպոց  
բախմանէ յօդոյ ծնանին:

**ՀՅ.** — Զի՞նչ է մըրիկն:

**ՊԽ.** — Ի պատուածէ երկրի ելանեն արգելեալք ի ձմեռան ժամանակի  
ցուրտք և շրջապատեալք ջերմ օդով թոշին ի վեր, զոր փոթորիկ անուանեն,  
որ խնդրէ զվերին ընկերս իւր՝ զցուրտս, մինչև կորնչի:

**ՀՅ.** — Զի՞նչ է գետնաշարժն:

**ՊԽ.** — Թանձր գոլորշի է արտաքոյ քարշեալ յերկիր և նեղեալ // և յելսն  
շարժէ զերկիր և կամ հողմն արտաքս թիւրեալ ի ճանապարհէ իրմէ և ի խո-

ոռշ երկրի մտեալ և վասն թանձրութեան երկրին շարժէ զնա, մինչև գտանէ ելս և ապա դադարէ:

ՀՅ.— Զի՞նչ է որ ջուրք ծովու աղի են, և վասն է՞ր աղբիւրք և գետք, որ առ մեզ են, բղխեն՝ քաղցր են:

ՊԽ.— Զուրք ծովուն ընդ մեջ երկրին անցանեն և պարզին ի ժանգոյն և ի դառնութեանցն, զի երկիր և աւազք զդառնութիւն յինքեանս քաշեն և մնայ քաղցր ջուրն, որ բղխէ:

ՀՅ.— Զի՞նչ է և կամ ուստի՞ ջերմանան աղբիւրք և ջերմուկք:

ՊԽ.— Որպէս ի մեջ երկրի գոն երակք ջրոյ, նոյնպէս և հողմոյ, ուստի ի վեր փշեն, նոյնպէս և հրոյ, ուստի ծծումբն գօրութեամբ ունի զհուրն, և յորժամ աղբեկք ջրոյ մերձին յերակն հրոյ, որ է ծծումբն, ջերմանան խիստ կամ թոյ՝ ըստ մերձ և հեռի անցանելովն:

ՀՅ.— Զի՞նչ է որ աղբիւրք ի ձմեռային ջերմ բղխեն և յամարայնի՝ յուրատ:

ՊԽ.— Նախ զի ձմեռն ջերմութիւնն ի սիրտ երկրի ժողովի և ամառն ի վեր ի յերեսն սփոփ, որպէս ծառք որ ի ձմեռայնի յարմատն ժողովեն ջերմութիւնն, նոյնպէս և երկրի: Դարձեալ ձմեռն հեռանայ յերեսաց երկրի և մերձի ի ներքոյ երկրի, նոյնպէս ամառն մերձի յերեսս երկրի և հեռանայ ի ներքուստ, վասն որոյ բղխեն ջերմ և յուրատ:

ՀՅ.— Զի՞նչ է որ ի լերինս բղխեն աղբիւրք առաւել քան ի դաշտս:

ՊԽ.— Նախ ասեն ոմանք թէ ո՛քան բարձր է ի վերայ երկրի հողն, նոյնքան ծործողք է ի ներքին կողմն, վասն որոյ ջուրք ծովուն դիւրեաւ ելանեն և այլ զի ամենայն ուրեք հողն ընդ ջրոյն խառնի և յայտ է ի ջրհորս, և 107ա ջուրն որ բարձրացեալ է քնդ հողոյն // իշանէ ի խոնարհ և բղխէ աղբերք: Դարձեալ ցոյցք է ամենահրաշ խնամոցն Աստուծոյ, որ զհոսանուս ջուրս ներքին ի մէջ լերանց ի վեր հանէ ի պիտու կենդանեաց որ ամնդ են և յուղումն բռասոց և տնկոց:

ՀՅ.— Վասն է՞ր կոչի երկիր:

ՊԽ.— Նախ զի երկու փր է, այսինքն հող և ջուր, զի տմի ջուր ընդ իւրեաւ ի ներքուստ և ի դրուց, և դարձեալ զի երկիր յերերման և ի տատանմանէ ի մեջ փորձանաց, վասն որոյ ասէ երկիր և կաց ի կասկածանս, զի երկիր կայ անկանելոյ ի բարոյն և թէ անկեալ ես երկիր ի պատժոց, այլ և աշխարհ կոչի աշխար և սուգ և տրտմութեան հովիտ:

ՀՅ.— Զի՞նչ պետք են բարձրագոյն լերինք:

ՊԽ.— Նախ զի հաստատութիւն և բրգունք են երկրի և բաժանիչք, և սահմանիչք աշխարհի, այլ և տեղիք են բարեխառն ի շող ժամու և յամրոց խոռվութեանց աւուց, դարձեալ ի պէտու բռասոց և բժշկական դեղոց ընդ ամառուսցաւ զիսոտ ի լերինն: Եւ են տեղի երէց մեծաց և փոքրոց, ընդ ամալերինք բարձրունք են եղջերուաց և վէմք ապամէնք նախաստակաց:

ՀՅ.— Վասն է՞ր ի ստորոտս լերանց առաւել շող լինի, քան զգլուխն, որ մերձ է արեգականն:

ՊԽ.— Նախ զի շնչմոմք հողմոց ի բարձունս են և բարձանց ջերմութիւնն բարեխառն են, իսկ ի դաշտս ոչ է հողմն, վասն որոյ առաւել շող է: Դարձեալ՝ զի վերին մասն օդոյն պարզ է և ներքին մասն մերձեալ յերկիր թանձրանայ ի չորութեանց նորին և ջերմութիւնն խառնեալ լինդ այն և առա-

մել շող լինի և այլ անդ մէկին և աստ վրկին չերմութիւն, զի հասեալ ի գոգ  
երկրի մակդարձութեամբս ժողովի առ նա և շող լինի;

107<sup>բ</sup> ՀՅ.— Քանի՛ են գլ/իսաւոր արարածք:

ՊԽ.— Ոմանք քսան և երկու ամեն՝ ըստ նշանագրացն երրայեցոց և  
ալլք քսան և չորս՝ ըստ ժամուց աւուրցն: Եւ է այս. առաջին աւուրն եօթն են,  
այսինքն՝ հրեղեն երկինքն և չորս տարերքն և լոյսն և հրեշտակք ընդ լու-  
սոյն, երկրորդ օրն՝ հաստատութիւնն և շրեղեն կամարն և ծովք և ցամաք  
երկիր, երրորդ օրն՝ բոլոք և տունք և դրախտն, չորրորդ օրն՝ արեգակն և  
լուսին և աստեղքն, հինգերորդ օրն՝ լուղակք և թոշունք, վեցերորդ՝ ցամաքա-  
յին կենդանիք և Արդամ և Եւա, եօթներորդ օրն շարաթ, որ է հանգիստ, այլ  
և տիւ և գիշեր, որք ընդ լուսոյն եղեն, որով լինի քսան և շորս: Եւ սոքա են  
պլխաւորագոյնքն, իսկ ամազք և հողմունք՝ ի յօդոյն, որպէս քարինք և երկաթ  
ի յերկրէ:

ՀՅ.— [Ո՞րպէս] եղկ քացատ ժամանակի ի ստեղծանելն:

ՊԽ.— Որպէս քթիել ականն, որ քան վաղվաղակի կարես քանալ զակն,  
զրուրն համանգամայն ստեղծ, այլ զմասունս որոշեաց յաւուս վեց, որ վե-  
րոյ ասացաք զամենայն և այն իւրն է գիտելի ամենագէտն Արարշին, իսկ  
մեզ, զոր գիրք սուրբ լուսալ են՝ լուսութեամբ պատուեսցի և մի՛ մտացածին  
բանիւք վտարանդեալ ի փուք կորստեան անկցուք: Այլ յամենայնի փառաւո-  
րեսցուք զԱմենասուրբ զԵրրորդութիւնն յափսեանս ամէն:

